ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
MINISTRY OF CULTURE OF THE RA

Armenian State Symphony Orchestra

Armenian Composers Art Festival

Տերտերյան ֆեստ

Փառատոնը նվիրվում է
Ավետ Տերտերյանի
90-ամյակին

10

20.02.19 - 12.03.19

Հայ կոմպոզիտորական արվեստի
10-րդ հոբելյանական փառատոն

Ողջույնի խոսք՝

ՆԱՋԵՆԻ ՂԱՐԻԲՅԱՆ

ՀՀ մշակույթի նախարարի պարտականությունները կատարող

Ջերմորեն ողջունում եմ Հայ կոմպոզիտորական արվեստի 10-րդ փառատոնի բոլոր մասնակիցներին և հյուրերին:
Փառատոնը կարևոր դերակատարություն է ստանձնել հայկական երաժշտարվեստի զարգացման և հանրահռչակման գործում:
Կոմպոզիտորական արվեստի խթանման և նոր ստեղծագործությունների կատարման շնորհակալ գործունեությանը զուգահեռ՝ այն ամեն տարի, հագեցած համերգային ծրագրերի ներկայացմամբ, արժևորում և հանրահռչակում է հայ կոմպոզիտորների ստեղծագործական ժառանգությունը:

Այս տարի փառատոնն իրականացվում է Տերտերյան-ֆեստ խորագրով և, վստահ եմ, փառատոնի շրջանակներում մեզ բոլորիս հրաշալի առիթ կընձեռվի նորովի բացահայտելու մեծանուն կոմպոզիտորի անմահ ստեղծագործությունները:
Առանձնահատուկ ոգևորությամբ ցանկանում եմ շեշտել փառատոնի մեկ այլ կարևոր և դրվատանքի արժանի առաքելության մասին. ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս, փառատոնի շրջանակներում հնչող ստեղծագործությունները կթվայնացվեն և ի պահ կտրվեն ապագա սերունդներին՝ վավերացնելով մեր օրերի հարուստ մշակութային անցուդարձն ու արդի կատարողական արվեստի նվաճումները:
Շնորհավորում եմ փառատոնի 10-րդ հոբելյանական մեկնարկի առթիվ:
Բարի երթ:

Ողջույնի խոսք՝

ՍԵՐԳԵՅ ՍՄԲԱՏՅԱՆ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր

Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը հայկական կոմպոզիտորական դպրոցի պահպանմանն ու հանրայնացմանն ուղղված նախաձեռնություն է:
Մեզնից յուրաքանչյուրը պետք է ձգտի իր աշխատանքով ներդրում ունենալ երկրի զարգացման, մեր արժեքների պահպանման, ապագայի կառուցման գործում:
Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնն իրականացվում է հենց այդ տեսլականից ելնելով: Սա նախաձեռնություն է, որ միտված է ապագային:

Անցած 9 տարիների ընթացքում Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնն իրականացրել է 48 համերգ՝ հնչեցնելով 78 հայ կոմպոզիտորի ավելի քան 200 ստեղծագործություն, թվայնացվել են հայ կոմպոզիտորների մի շարք արժեքավոր ստեղծագործություններ:
Փառատոնը հայկական մշակույթը հանրայնացնում է՝ ներգրավելով հանրահայտ մենակատարների՝ Հասմիկ Պապյան, Սերգեյ Խաչատրյան, Նարեկ Հախնազարյան, Նարե Արղամանյան, Իլյա Գրուբերտ, Սոյունգ Յուն, Դենիս Շապովալով և այլք:
Անցած 9 տարիներին իրականացվել է հսկայածավալ աշխատանք, և Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը շարունակելու է հայկական երաժշտական արվեստի պահպանմանն ու հանրահռչակմանն ուղղված իր առաքելությունը:
Մենք պարզապես պարտավոր ենք խնամքով, հոգածությամբ, հպարտությամբ ու ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել մեր մշակույթին: Մենք վճռական ենք այդ գործում և ներդնելու ենք մեր ամբողջ ներուժը՝ աշխարհին ներկայացնելու հայկական երաժշտական ժառանգությունը:

ՀԱՅ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ 10-ՐԴ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ

Հայաստանյան արդի մշակութային կյանքում արդեն տասը տարի շարունակ իր ուրույն և անփոխարինելի տեղն ունի Հայ կոմպոզիտորական արվեստի փառատոնը: Երկար տարիների պատմություն ունեցող հայ կոմպոզիտորական դպրոցի ավանդույթների և ներկայիս ձեռքբերումների պահպանությանն ուղղված այս ծրագրի կազմակերպիչը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբն է: Ստեղծման առաջին իսկ օրվանից փառատոնն անց է կացվում ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ:
Փառատոնի գլխավոր նպատակը հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների տարածումն է ունկնդրի լայն շրջանակներում, հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ և կամերային ստեղծագործությունների ձայնագրումը, տեսագրումը, նոտաների թվայնացումը և պահպանումը: Փառատոնը նաև հնարավորություն է ստեղծում հայ երիտասարդ կոմպոզիտորների ստեղծագործությունների հնչեցման համար: Փառատոնի համերգային երեկոներին հանդես են գալիս մենակատարներ արտերկրից և Հայաստանից՝ ընդգրկելով վերջիններիս երկացանկում հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ:
Անցած ինը տարիների ընթացքում փառատոնի շրջանակներում թվայնացվել են 70-ից ավելի հայ կոմպոզիտորների սիմֆոնիկ և կամերային ստեղծագործություններ, ձայնագրվել են 200-ից ավելի ստեղծագործություններ, իրականացվել են 100-ից ավելի ստեղծագործությունների պրեմիերաներ՝ ներգրավելով Հայաստանում գործող կոլեկտիվներին և կամերային անսամբլներին:
Յուրաքանչյուր տարի փառատոնը նվիրվում է անվանի հայ կոմպոզիտորներից մեկին՝ Սարյան-ֆեստ (2010թ.), Բաբաջանյան-ֆեստ (2011թ.), Չուհաճյան-ֆեստ (2012թ.), Ռոմանոս Մելիքյան-ֆեստ (2013թ.), Տերտերյան-ֆեստ (2014թ.), Էդգար Հովհաննիսյան-ֆեստ (2015թ.), Միրզոյան-ֆեստ (2016թ.), Հարո Ստեփանյան-ֆեստ (2017թ.), Գրիգոր Եղիազարյան-ֆեստ (2018թ.):

Եվ ահա 2019թ-ին, երբ լրանում է փառատոնի տասնամյակը, հոբելյանական փառատոնը նվիրվում է 20-րդ դարի հայ կոմպոզիտորական դպրոցի վառ և ինքնատիպ ներկայացուցիչներից մեկին՝ Ավետ Տերտերյանի 90-ամյակին: Տերտերյանի ստեղծագործական ժառանգությունն իր նորարարությամբ և խիզախությամբ նոր խոսք է ոչ միայն հայ կոմպոզիտորական արվեստում, այլ համաշխարհային երաժշտության մեջ: Հայտնի է, որ հայ կոմպոզիտորների բազմաթիվ ստեղծագործությունների նոտաներ հիմնականում գտնվում են կոմպոզիտորների արխիվներում և անհասանելի են համերգասրահներից կատարման համար: Յուրաքանչյուր տարի փառատոնի ընթացքին զուգահեռ իրականացվում է հայ կոմպոզիտորների ստեղծագործությունների նոտաների թվայնացման աշխատանքներ: Հենց նոտաների անմխիթար վիճակում լինելու կամ ընդհանրապես նվագաբաժինների բացակայության պատճառով տարիներ շարունակ անհնար է դառնում այդ ստեղծագործությունների կատարումը:
Այս տարի հոբելյանական 10-րդ փառատոնի շրջանակներում կոմպոզիտորների ձեռագրերից թվայնացվել են Հարո Ստեփանյանի, Էդվարդ Միրզոյանի ստեղծագործություններից, որոնք ավելի քան 50 տարվա ընդմիջումից հետո կհնչեն փառատոնի համերգների ընթացքում:
Որպես անցած 10 տարիներին կատարված աշխատանքի ամփոփում՝ 10-րդ հոբելյանական փառատոնը ներառում է 4 համերգային երեկո, որոնց ծրագրերում Ավետ Տերտերյանի 7-րդ և 8-րդ սիմֆոնիաների կողքին կհնչեն 20-րդ դարի հայ կոմպոզիտորական դպրոցի անվանի կոմպոզիտորների սիմֆոնիկ ստեղծագործությունները: Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ կհնչեն Գ.Եղիազարյանի «Հրազդան» սիմֆոնիան, Է.Հովհաննիսյանի Պասակալիան «Անտունի» բալետից, Ղ.Սարյանի Սիմֆոնիկ ատկերներ, Ա.Բաբաջանյանի Թավջութակի կոնցերտը (մենակատար Դենիս Շապովալով), Հ.Ստեփանյանի Դաշնամուրի կոնցերտը (մենակատար՝ Արմեն Բաբախանյան), Տ.Չուհաճյանի Անդադար շարժումը (մենակատար՝ Լիլիթ Արտեմյան) և այլ ստեղծագործություններ:

Փառատոնը կմեկնարկի ՀՀ ժողովրդական արտիստ Հաստիկ Պապյանի հետ համատեղ համերգային ծրագրով, որի ընթացքում կհնչեն հայ կոմպոզիտորների օպերաներից հատվածներ, ռոմանսներ և երգեր: Ի դեպ, փառատոնի շրջանակներում մի քանի ռոմանսներ և երգեր գործիքավորվել են սոպրանոյի և սիմֆոնիկ նվագախմբի համար և նվագակցության այս կազմով հնչելու են առաջին անգամ:

ԱՎԵՏ ՏԵՐՏԵՐՅԱՆ

(1929-1994)



Կոմպոզիտոր, ՀՀ և ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ավետ Տերտերյանը 20-րդ դարի հայ երաժշտության վառ ու ինքնատիպ անհատականություններից է: Նրա անվան հետ է կապվում հայկական սիմֆոնիզմի զարգացման նոր շրջանը:
Ավետ (Ալֆրեդ) Տերտերյանը 1948-1951 թթ-ին սովորել է Բաքվի երաժշտական ուսումնարանում, 1957 թ-ին ավարտել է Երևանի կոնսերվատորիան (Էդվարդ Միրզոյանի դասարան), 1967թ-ին՝ նույն ԲՈՒՀ-ի ասպիրանտուրան: 1970-94 թթ-ին դասավանդել է կոնսերվատորիայում (1985թ-ից պրոֆեսոր): 1960-63թթ-ին եղել է Հայաստանի կոմպոզիտորների միության քարտուղար:
Նրա երաժշտության մեջ նշանակալի տեղ են գրավում «Կրակե օղակ», «Երկրաշարժ» (ըստ Հայնրիխ ֆոն Կլայստի, առաջին բեմադրությունը Մյունխենում՝ 2003թ-ին, Վոլֆ Էբերմանի մրցանակ՝ 2004թ.) օպերաները, «Ռիչարդ III-ի մենախոսությունները» բալետը, «Հայրենիք» և «Հեղափոխություն» վոկալ-սիմֆոնիկ շարքերը, լարային երկու կվարտետները, Թավջութակի և դաշնամուրի սոնատը: Առավել հայտնի են կոմպոզիտորի 8 սիմֆոնիաները, որոնք աչքի են ընկնում ձևի, բովանդակության, երաժշտական լեզվի, շարականների ավանդույթների փոխակերպման նորարարական հնարքներով: Տերտերյանի 9-րդ սիմֆոնիան անավարտ է: Սիմֆոնիաներում ինքնատիպ արտահայտչամիջոցներով արծարծված են տիեզերական ներդաշնակության, մարդու և բնության փոխհարաբերության հավիտենական խնդիրները: Ա. Տերտերյանը հեղինակ է նաև բազմաթիվ ռոմանսների («Սոխակ և վարդ»՝ ըստ Ալեքսանդր Պուշկինի, «Ամեն գիշեր իմ պարտեզում», «Գետակի վրա»՝ ըստ Ավետիք Իսահակյանի, և այլն) ու երգերի («Օրորոցային իմ քաղաքի», «Աշնանային բլյուզ»՝ ըստ Անդրեյ Վերդյանի, և այլն): Նրա սիմֆոնիկ ստեղծագործությունները ղեկավարել են ճանաչված դիրիժորներ Գենադի Ռոժդեստվենսկին, Ալեքսանդր Լազարևը, Ջանսուղ Կախիձեն, Դավիթ Խանջյանը և ուրիշներ:
Ավետ Տերտերյանը միահյուսել է ազգային երաժշտության հնագույն ավանդույթները և արևմտաեվրոպական երաժշտության նորագույն տեխնիկական հնարքները, ընդլայնել է սիմֆոնիկ ժանրի շրջանակները, անդրադարձել հայկական ժողովրդական և հոգևոր երաժշտության, հնագույն արևելյան մշակույթների խոր ավանդույթներին: Սիմֆոնիաների ձայնային ծավալն ապշեցնում է տիեզերական ու վերժամանակային ընդգրկմամբ, դրանց բովանդակությունը՝ միտված մարդկության գլոբալ հիմնախնդիրներին:
Շարունակելով սիմֆոնիզմի դասական ավանդույթները, Ավետ Տերտերյանը հանդես է գալիս որպես իսկական նորարար, առաջին անգամ սիմֆոնիկ նվագախմբի կազմում ընդգրկելով ժողովրդական գործիքներ՝ դուդուկ, զուռնա, քամանչա, դափ և այլն:
Տերտերյանը գրել է երաժշտություն նաև կինոնկարների համար. գեղարվեստական՝ «Երևանյան օրերի խրոնիկա», 1972թ., «Քամին ունայնության», 1989թ., «Հին աստվածներ»՝ ըստ Լևոն Շանթի, 1993թ., «Վերջին կայարան», 1994թ., մուլտիպլիկացիոն՝ «Երազահան», 1989թ., բոլորը՝ Հայֆիլմ, վավերագրական՝ «Անվերջ ձգվող դասամիջոց», «Հայր մեր», «Ցասման հացը», երեքն էլ՝ 1996 թ., «Երևան» ստուդիա) և թատրոնի («Յոթ կայարան»՝ ըստ Սիլվա Կապուտիկյանի, 1971 թ., Վիլյամ Շեքսպիրի «Ռիչարդ III», 1972 թ., «Ավերված քաղաքի առասպելը», 1975 թ.՝ ըստ Պերճ Զեյթունցյանի «Արշակ Բ» վեպի):
Եկատերինբուրգում չորս անգամ անցկացվել են Տերտերյանի երաժշտության փառատոներ: 2015-2018թթ. Հայաստանում անցկացվել է «Տերտերյանի ժամանակը» փառատոնը: Հայ կոմպոզիտորական արվեստի 5-րդ փառատոնը ևս նվիրված էր Ավետ Տերտերյանին:
Տերտերյանն արժանացել է ԽՍՀ Պետական մրցանակի (1977թ.), ՀՀ մշակույթի նախարարության Արամ Խաչատրյանի անվան մրցանակի (1993թ.), հետմահու պարգևատրվել ՀՀ Մովսես Խորենացու մեդալով (1998թ.):
Տերտերյանի կոմպոզիտորական ժառանգության ուսումնասիրման համար հեղինակվել են գիտահետազոտական աշխատանքներ (Լիդիա Պտուշկո, Մարգարիտ Ռուխկյան):
Երևանի երաժշտական դպրոցներից մեկը կրում է Տերտերյանի անունը: Տերտերյանի անունով է կոչվել նաև Եկատերինբուրգ քաղաքի կենտրոնական զբոսայգին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ

Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը ստեղծվել է 2005թ.-ին՝ որպես Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբ: Հիմնադիր Սերգեյ Սմբատյանը, ով առ այսօր գլխավորում է կոլեկտիվը, միավորել է երիտասարդ ու տաղանդավոր երաժիշտների, ում աշխատասիրությունն ու նվիրվածությունը, կյանքի ուղու ճիշտ ընտրության գիտակցումը և նպատակաուղղվածությունը կարճ ժամանակահատվածում ապահովել են կոլեկտիվին երաժշտասեր հասարակության ընդունելություն և միջազգային ճանաչում: 2008թ.-ին բարձր վարպետության և արդի երաժշտության տարածման համար ՀՀ կառավարության որոշմամբ նվագախումբը ստանձնել է պետական կարգավիճակ:

Նվագախումբը հանդես է եկել բազմաթիվ համերգներով Հայաստանում և դրա սահմաններից դուրս: Երաժիշտները ներկայացել են Գերմանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Բելգիայի, Չինաստանի, Նիդերլանդների, Իտալիայի, Լիբանանի և շատ այլ երկրների հեղինակավոր համերգասրահներում, այդ թվում՝ Opera Garnier (Փարիզ), Konzerthaus (Բեռլին), Dr. Anton Philipszaal (Հաագա), Չայկովսկու անվան համերգասրահ և Կոնսերվատորիայի Մեծ համերգասրահ (Մոսկվա), Palais des Beaux-Arts (Բրյուսել) և այլն: Նվագախումբը մասնակցել է Մոսկովյան Ջատկի (Մոսկվա/Ռուսաստան), Լյուդվիգ վան Բեթհովենի անվան Ջատկի (Վարշավա/Լեհաստան) և մի շարք այլ միջազգային փառատոների, անընդմեջ հանդես է գալիս որպես միջազգային նախագծերի պաշտոնական նվագախումբ՝ Արամ Խաչատրյանի անվան մրցույթ (2007թ.-ից մինչ օրս), Musica Riva փառատոն (2013թ., Իտալիա), Ֆրեդերիկ Շոպենի անվան երիտասարդ դաշնակահարների 9-րդ մրցույթ (2014թ., Չինաստան) և Al Bustan փառատոն (2014թ. 2015թ., 2016թ., Լիբանան) և այլն:

Սիմֆոնիկ նվագախումբը սերտ ստեղծագործական հարաբերություններ ունի բեմի աշխարհահռչակ վարպետներ Վ.Գերգիևի, Ք.Պենդերեցկու, Վ.Սպիվակովի, Մ.Վենգերովի, Դ.Մացուևի, Վ.Ռեպինի, Բ.Բերեզովսկու և այլ նշանավոր արվեստագետների հետ:
Նվագախումբն անընդմեջ հանդես է գալիս նոր ծրագրերի նախաձեռնություններով, այդ թվում՝ բարեգործական: 2010թ.-ից նվագախմբի նախաձեռնությամբ անց է կացվում Հայ կոմպոզիտորական արվեստի ամենամյա փառատոնը, իսկ 2013թ.-ից՝ ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ կյանքի է կոչվում ամենամյա Խաչատրյանի միջազգային փառատոնը:

Նվագախմբի լայն երկացանկն ընդգրկում է դասականից մինչև ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործություններ: 2011թ.-ին Sony ձայնագրման ստուդիայում Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը, գեղարվեստական ղեկավար Սերգեյ Սմբատյանի գլխավորությամբ, թողարկել է անդրանիկ Music is the answer ձայնասկավառակը, որում ընդգրկվել են Պյոտր Չայկովսկու, Դմիտրի Շոստակովիչի և Էդուարդ Հայրապետյանի ստեղծագործությունները:

2017-ի կարևորագույն իրադարձությունը, թերևս, նվագախմբի՝ նոր կարգավիճակի ձեռքբերումն էր: Իր գործունեությամբ Երիտասարդական նվագախումբը նոր նշաձող էր սահմանել՝ ստեղծել ու իրականացնել այնպիսի նախագծեր, որոնք ավելին են, քան սովորաբար իրականացնում են երիտասարդական նվագախմբերը: Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբը վերանվանվել է՝ դառնալով Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ և ուրվագծում է նոր ու հավակնոտ հորիզոններ:
2018թ.-ից Նվագախումբի նախաձեռնությամբ և ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ համատեղ կյանքի է կոչում կարևորագույն կրթամշակութային ծրագիր՝ ԴասA կրթական ծրագիրը:

ՍԵՐԳԵՅ ՍՄԲԱՏՅԱՆ

Գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր

Հայ դիրիժոր Սերգեյ Սմբատյանը Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի (Նախկինում՝ Հայաստանի պետական երիտասարդական նվագախումբ) հիմնադիրն է, գեղարվեստական ղեկավարն ու գլխավոր դիրիժորը: Մշակույթի բնագավառում ունեցած հաջողությունների համար 2016թ.-ին Սերգեյ Սմբատյանը ՀՀ նախագահի կողմից արժանացել է Հայաստանի Հանրապետության վաստակավոր արտիստի կոչմանը, ինչպես նաև 2017 թ.-ին Երևանի քաղաքապետի կողմից արժանացել Ոսկե մեդալի:
Սերգեյ Սմբատյանը հիմնադրել է նվագախումբը 18 տարեկանում: Սմբատյանի ղեկավարությամբ նվագախումբը բազում հրավերներ է ստացել միջազգայնորեն ճանաչված փառատոներից և կարևոր համերգասրահներից: 2015թ.-ին կոլեկտիվը ներկայացրել է Հայաստանը Կաննում՝ MIDEM փառատոնի շրջանակներում, որտեղ Հայաստանը հռչակվել է «Պատվո երկիր»: 2017թ.-ի ապրիլին նվագախումբը, դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ, հանդես է եկել Լյուդվիգ վան Բեթհովենի անվան Ջատկի փառատոնի շրջանակներում:
2016թ. մայիսին Սմբատյանին շնորհվել է Debut Berlin միջազգային համերգ-մրցույթի առաջին մրցանակը: Դափնեկիրների համերգը տեղի է ունեցել հունիսի 1-ին Բեռլինի ֆիլհարմոնիկ դահլիճի կամերային երաժշտության սրահում:
Վերջին համերգաշրջանների առավել նշանակալի միջոցառումներից են Սմբատյանի ելույթները Մարիինյան թատրոնի սիմֆոնիկ և Մոսկվայի ֆիլհարմոնիկ նվագախմբերի, Բեռլինի Գերմանական սիմֆոնիկ նվագախմբի, Դրեզդենի ֆիլհարմոնիկ նվագախմբի, Վարշավայի ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ Լյուդվիգ վան Բեթհովենի անվան 19-րդ Ջատկի փառատոնի շրջանակներում, Մյունխենի սիմֆոնիկ նվագախմբի, ինչպես նաև Սեուլի արվեստի կենտրոնում Կորեայի կամերային նվագախմբի հետ: Վերջին նվագախմբի հետ համագործակցությունն ավելի ուշ շարունակվել է Մոսկվայում՝ մենակատար Պինկաս Ցուկերմանի հետ, ինչպես նաև Բոստոնում և Նյու Յորքի «Քարնեգի հոլ» համերգասրահում:
Երաժշտի կարիերայում կարևոր տեղ է զբաղեցնում առաջնաելույթը Լոնդոնի սիմֆոնիկ նվագախմբի և LSO Discovery-ի հետ համերգը: Ներկայանալով մեծանուն երաժիշտ Մաքսիմ Վենգերովի հետ՝ Սմբատյանը ղեկավարել է Վինձորի ամրոցում Նորին Գերազանցություն արքայազն Չարլզի Princes Trust միջոցառման շրջանակներում կազմակերպված գալա համերգը: Միջոցառման հաջողությամբ պայմանավորված՝ 2011թ.-ին համերգը կրկնվել է Բուքինգհեմյան պալատում, որտեղ Սմբատյանը ևս մեկ անգամ ղեկավարել է Philharmonia Orchestra-ն:
2016թ. երաժշտության և գրականության համադրությամբ լիովին նոր նախագծի պրեմիերայով մեկնարկեց Սմբատյանի և աշխարհահռչակ դերասան Ջոն Մալկովիչի համատեղ համաշխարհային համերգային շրջագայությունը:
2016թ. սեպտեմբերի 21-ին Սմբատյանը ղեկավարել է «Անկախության սերունդ» համա-հայաստանյան երգչախմբի և նվագախմբի անդրանիկ համերգը: Յուրահատուկ նախագիծը, որի հեղինակը հենց ինքը՝ Սմբատյանն էր, մեկ բեմում է միավորել 1144 երաժիշտների Հայաստանի տարբեր մարզերից և Արցախից:
Սմբատյանը նաև 2015թ.-ին հիմնադրել է «24/04» Համաշխարհային նվագախումբը և 2017 թ.-ին՝ Համահայկական նվագախումբը: Վերջինիս առաջնաելույթը, դիրիժոր Սերգեյ Սմբատյանի ղեկավարությամբ, տեղի է ունեցել «Գրամոֆոն» 40-րդ հոբելյանական մրցանակաբաշխության ընթացքում:
Սմբատյանի՝ որպես դիրիժորի կայացման գործում նշանակալի ազդեցություն են գործել սըր Քոլին Դևիսը, Ռիկարդո Մուտին, ինչպես նաև Վալերի Գերգիևը: Վերջիններս ոգեշնչել են Սմբատյանին՝ հիմնադրելու Խաչատրյանի դիրիժորների մրցույթը:
Որպես հայ ժամանակակից երաժշտության գիտակ՝ Սմբատյանը հանդիսանում է Հայ կոմպոզիտորական արվեստի և Խաչատրյանի միջազգային փառատոների հիմնադիրն ու գեղարվեստական ղեկավարը, ինչպես նաև «Արմենիա» միջազգային փառատոնի գեղարվեստական ղեկավարը: Դիրիժորը ձգտում է ակտիվ մասնակցություն ունենալ Հայաստանում իրականացվող բարեգործական ծրագրերին ծերանոցներում, մանկատներում և համալսարաններում: «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության շարունակական գեղարվեստական աջակցությունը արտիստի կարիերայի խոշորագույն մարդասիրական գործունեություններից է:
2009թ. Սմբատյանը հիմնադրել է ՅՈՒՆԻՍԵՖ մանկական նվագախումբը, որը բազմաթիվ համերգներով հանդես է եկել Հայաստանում և Եվրոպայում:
2015թ. Ֆրանսիայի մշակույթի և կապի նախարարությունը Սմբատյանին պարգևատրել է Ֆրանսիայի Արվեստի և գրականության շքանշանով:

ՓԵՏՐՎԱՐԻ 20
19:00

Արամ Խաչատրյան համերգասրահ
Փառատոնի բացման համերգ

Ծրագիր

Ղազարոս Սարյան՝ Սիմֆոնիկ պատկերներ
I Նախերգանք
II Լուսաբաց
III Խնջույք
IV Կատակ
V Ֆինալ

Տիգրան Չուխաճյան՝ Ավե Մարիա
Բնօրինակ տարբերակ
Խմբագրումը՝ Ջոն Սարգսյանի

Կոմիտաս՝ Չինար ես
Մշակումը Կարեն Անանյանի

Արմեն Տիգրանյան՝ Անուշի երգը «Անուշ» օպերայից (Ասում են ուռին)

Էդգար Հովհաննիսյան՝ Բաքոսատոն «Մարմար» սյուիտից

Անդրեյ Բաբաև՝ Մարոյի ողբը «Արծվաբերդ» օպերայից

Էդվարդ Միրզոյան՝ Վալս

Էդվարդ Միրզոյան՝ Ռոմանս «Ասում են, թե...»
Գործիքավորումը՝ Մելիք Մավիսակալյանի

Պետրոս Շուժունյան՝ Անխինդ

Էդգար Հովհաննիսյան՝ Ադաջո «Մարմար» սյուիտից

Առնո Բաբաջանյան՝ Արիա-վոկալիզ

Ալեքսանդր Հարությունյան՝ Երգիր ինձ համար

Վաղարշակ Կոտոյան՝ Իմ Երևան
Գործիքավորումը՝ Մելիք Մավիսակալյանի

Կոմիտաս՝ Կաքավիկ
Գործիքավորումը՝ Զարեհ Սահակյանցի

Մենակատար՝ **Հասմիկ Պապյան (սոպրանո)**

Դիրիժոր՝ **Սերգեյ Սմբատյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ

ՀԱՍՄԻԿ ՊԱՊՅԱՆ

սոպրանո

Հայ սոպրանո Հասմիկ Պապյանն ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան նախ որպես ջութակահարուհի, այնուհետև որպես երգչուհի:
Նա դափնեկիր է դարձել չորս միջազգային մրցույթներում՝ ֆրանսիական Տուլուզ քաղաքի, Վիեննայի բելվեդերյան, Մոսկվայի Չայկովսկու և Սոֆիայի Բորիս Խրիստովի անվան մրցանակաբաշխություններում:

Հայաստանի ազգային օպերային թատրոնում Պուչինիի «Բոհեմ» օպերայում Միմիի դերերգով իր առաջնախաղից հետո Հ. Պապյանը հրավիրվել է Գերմանիայի Բոնն քաղաքի օպերային թատրոն, այնուհետև Դյուսսելդորֆ, և շուտով սկսել իր միջազգային կարիերան համաշխարհային մեծ օպերային թատրոնների բեմերում:

Նրա խաղացանկը ներառում է դերերգեր Վագների «Տրիստան և Իզոլդա» (Իզոլդա), Մոցարտի «Դոն Ժուան» (Դոննա Աննա), Ռոսսինիի «Վիլհելմ Թելլ» (Մաթիլդ), Բիզեի «Կարմեն» (Միքաելա), Պուչինիի «Տոսկա», «Մադամ Բատերֆլայ» (Չիո-Չիո-Սան), Չայկովսկու «Պիկովայա դամա» (Լիզա), Վերդիի «Տրավիատա» (Վիոլետա), «Օթելլո» (Դեզդեմոնա), «Աիդա», «Նաբուկկո» (Աբիգայլ) և շատ այլ օպերաներից:

Կենտրոնական է հանդիսացել Նորմայի դերերգը Բելլինիի համանուն օպերայում, որի կատարմամբ Հ. Պապյանը հանդես է եկել Վիեննայում, Նյու-Յորքում, Վաշինգտոնում, Շտուտգարտում, Դեթրոյդում, Մարսելում, Ամստերդամում, որտեղ 2006թ. տեսագրվել է օպերան, Ռոտերդամում և այլուր:

Նկարահանված է նաև տեսասկավառակ՝ Փարիզի Բաստիլ օպերային թատրոնում Չայկովսկու «Պիկովայա դամա» օպերայում Լիզայի դերերգի նրա կատարմամբ (դիրիժոր՝ Գենադի Ռոժդեստվենսկի):

Հայ սոպրանոյի համերգային երկացանկը նույնպես հարուստ է. այն ներառում է Բախի, Մոցարտի, Բեթհովենի, Ռոսսինիի, Բրամսի, Ֆորեի, ինչպես նաև՝ Մանսուրյանի, Տերտերյանի, Չայկովսկու, Ռախմանինովի և այլոց գործերը:
2006 թ. Մյունխենում Audite ընկերության կողմից բաց է թողնվել նրա «Նվիրում Կոմիտասին» ձայնասկավառակը՝ կոմպոզիտորի 26 և գերմանական 9 երգերի ձայնագրությամբ:

Հասմիկ Պապյանը երգել է Վիեննայի, Նյու-Յորքի, Բեռլինի, Ժնևի, Լիոնի, Թել-Ավիվի, Անտվերպենի, Պալերմոյի, Հռոմի, Մադրիդի, Տոկիոյի, Սեուլի, Վարշավայի, Պետերբուրգի, Մոսկվայի, Չիլիի, Մոնրեալի և շատ ուրիշ օպերային թատրոններում:
Նա հանդես է եկել այնպիսի նշանավոր դիրիժորների հետ, ինչպիսիք են՝ Ռիկարդո Մուտին, Մարչելլո Վիոտտին, Վալերի Գերգիևը, Մյունգ-Վուն Չունգը և այլոք:
Նրա խաղընկերներն են եղել Պլասիդո Դոմինգոն, Ջակոմո Արագալը, Սալվատորե Լիչիտրան, Ռոբերտո Ալանյան, Գրեյս Բամբրին, Ելենա Օբրազցովան, Ֆիորենցա Կոսսոտտո, Նիկոլայ Գյաուրովը, Ռուջերո Ռայմոնդին, Լեո Նուչչին, Շերիլ Միլնեսը և շատ ուրիշներ:

Հասմիկ Պապյանը բնակվում է Վիեննայում:

ՏԻԳՐԱՆ ՉՈՒՀԱՃՅԱՆ

(1837 – 1898)

Կոմպոզիտոր, դիրիժոր, մանկավարժ, հասարակական գործիչ, հայկական օպերային արվեստի հիմնադիր Տիգրան Չուհաճյանն իր ստեղծագործություններով նպաստել է Արևելքի և Արևմուտքի երաժշտական արվեստների մերձեցմանը: Նրա երաժշտական ոճի ձևավորման մեջ մեծ դեր են խաղացել իտալական օպերայի դպրոցը և ֆրանսիական օպերետը: Նա գրել է մի շարք օպերետներ, որտեղ վառ արտահայտված է հայկական քաղաքային երաժշտական ֆոլկլորը: Չուհաճյանի «Արշակ Բ»-ն հայկական առաջին պատմառոմանտիկ օպերան է, որի հայոց պատմության 4-րդ դարի դրամատիկ դրվագներն արձագանքում էին ժամանակի հայ իրականության ազգային և սոցիալական ազատագրության իղձերին:

Տիգրան Չուհաճյանը հայ երաժշտական թատրոնի հիմնադիրն է, ինչպես նաև՝ Օսմանյան Թուրքիայի երաժշտական թատրոնի հիմնադիրը: 1870-ական թվականներին Չուհաճյանը ստիպված փոխել է իր ստեղծագործության ուղղվածությունը, գրել է երաժշտական կատակերգություններ՝ քողարկելով սոցիալ-քաղաքական տարրերը, առաջին գիծ մղել կենցաղային պատկերներ, երգիծական, զավեշտալի բեմավիճակներ, քնարական ապրումներ («Արիֆի խարդախությունը» (1872թ.), «Քեռսե Քեհյա» (1874թ.), «Լեբլեբիջի Հորհոր աղա» (1876թ.) և այլն): Ե. Մելիքյանի, Հ. Վարդովյանի և Ա. Պենկլյանի երաժշտաթատերական խմբերի համագործակցությամբ ստեղծված վերը նշված ներկայացումներով Չուհաճյանը հռչակվել է ամբողջ Թուրքիայում ու երկրի սահմաններից դուրս: 1880-ական թվականների վերջին Չուհաճյանն ավարտել է արաբական հեքիաթի հիման վրա գրված «Զեմիրե» օպերա-կախարդապատկերը (բեմադրվել է Կոստանդնուպոլսում, 1891-ին՝ ֆրանսիական, իսկ 1894-ին՝ իտալական խմբերի կատարմամբ):

1896 թ. Չուհաճյանը տեղափոխվել է Զմյուռնիա: Ըստ մամուլի, 1897-ին նա ավարտել է «Ինդիանա» օպերան ու սկսել երաժշտաթատերական նոր ստեղծագործություն, որն անավարտ է մնացել: Չուհաճյանը հեղինակ է նաև սիմֆոնիկ, կամերային-գործիքային և վոկալ երկերի, որոնց թվում է հայտնի «Գարուն» ռոմանսը:

ԿՈՄԻՏԱՍ

(1869 -1935)



Հայ երգահան, երգիչ, երաժշտական էթնոլոգ, երաժշտագետ, վարդապետ և ուսուցիչ, բանահավաք, խմբավար, մանկավարժ Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյան) հանդիսանում է հայկական ազգային կոմպոզիտորական դպրոցի հիմնադիրը:
Կոմիտասի գիտական և ստեղծագործական գործունեությամբ նոր էջ է բացվել հայ երաժշտական մշակույթի պատմության մեջ: Կոմիտասի ստեղծագործական ոճը յուրահատուկ է իր տեսակի մեջ: Հիմնվելով հայ ավանդական երաժշտական մշակույթի առանձնահատկությունների վրա՝ նա հայտնաբերել է հարմոնիայի և պոլիֆոնիայի կիրառման նոր և հարուստ հնարավորություններ, որոնք բնորոշ էին հայ երաժշտական մտածողությանը: Նրա երաժշտական ժառանգությունն ընդգրկում է վոկալ («Անտունի», «Կռունկ», «Ծիրանի ծառ», «Ալ այլուղս», «Զինչ ու զինչ» և այլն), խմբերգային՝ ժողովրդական և հոգևոր («Անձրևն եկավ», «Լուսնակն անուշ», «Գութաներգ», «Հայր մեր», «Ով զարմանալի», «Այսօր ձայնն հայրական», «Էջ Միածինն ի Հօրէ», «Տէր, ողորմեա» և այն), և դաշնամուրային («Յոթ պար», «Մշո շորոր» և այլն) ստեղծագործություններ:
Կոմիտասի ստեղծագործության մեջ առանձնակի կարևորություն է ներկայացնում իր միակ ավարտուն մեծակտավ գործը՝ «Պատարագ»-ը:
Անգնահատելի է Կոմիտասի ավանդը բանահավաքչության գործում: Շրջելով հայաբնակ բազմաթիվ բնակավայրերով՝ հմուտ երաժիշտը ձայնագրել է հայ ժողովրդական երգարվեստի տարբեր ժանրերի պատկանող ավելի քան 3000 հայկական ժողովրդական երաժշտության նմուշ, որից ավելի քան կեսը հետագայում կորել է և միայն մոտ 1200-ն է պահպանվել:
Որպես երգիչ և խմբավար՝ Կոմիտասը բազմաթիվ համերգներ է ունեցել Հայաստանում, Եվրոպայում, Եգիպտոսում և այլուր: Նրա կատարումները մշտապես հիացական արձագանք են ունեցել ունկնդրի շրջանում: Կոմիտասը կրթել է շնորհալի երիտասարդների մի սերունդ:

ԱՐՄԵՆ ՏԻԳՐԱՆՅԱՆ

(1879 – 1950)

Կոմպոզիտոր, խմբավար, ՀԽՍՀ և ՎԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Արմեն Տիգրանյանը հայկական ազգային օպերայի հիմնադիրն է: Արմեն Տիգրանյանը մեծ ավանդ է ունեցել հայ ազգային օպերայի, վոկալ և գործիքային երաժշտության մեջ: Տիգրանյանի վաղ շրջանի ստեղծագործություններն են՝ «Հովերն առան սար ու դարեր», «Ախ իմ ճամփեն», «Սև աչերեն» (Ավ. Իսահակյանի խոսքերով), «Սիրտ իմ լռիր», «Մ'նաք բարով» (Հ. Հովհաննիսյանի խոսքերով) երգերը և հայկական ժողովրդական երգերի խմբերգային մշակումները:
Նշանակալից էր նրա աշխատանքը նաև դաշնամուրային ստեղծագործության բնագավառում: Դաշնամուրային ստեղծագործություններում («Շիրակ Ջմրուխտի», «Արևելյան ֆանտազիա», «Հայկական պարերի սյուիտ», «Հինգ պիես դաշնամուրի համար» և այլն) նկատում ենք ժողովրդական տարրեր, մեղեդայնություն ու ռիթմիկա:
1908թ. Տիգրանյանն սկսել է գրել իր առաջին՝ «Անուշ» օպերան (ըստ Հ. Թումանյանի), որը հայկական երաժշտական թատրոնում հիմք է դրել ոճական նոր ուղղության: Նույն թվականին օպերայի առանձին հատվածներ ներկայացվել են Թիֆլիսում: «Անուշն» առաջին անգամ բեմադրվել է 1912 թ., Ալեքսանդրապոլսում: Հետագա 30 տարիների ընթացքում կոմպոզիտորը բազմիցս անդրադարձել է «Անուշ» օպերային՝ կատարելով որոշ փոփոխություններ, հավելումներ, վերանայել է գործիքավորումը:
Հայրենական մեծ պատերազմի տարիներին կոմպոզիտորը գրել է հայրենասիրական երկեր՝ Պարային սյուիտ սիմֆոնիկ նվագախմբի համար, «Դավիթ Բեկ» օպերան: «Դավիթ Բեկ»-ը Տիգրանյանն ավարտել է 1949-ին, սակայն առաջին ներկայացումը տեղի է ունեցել 1950թ., նրա մահից հետո՝ Երևանի օպերայի և բալետի թատրոնում:
Կոմպոզիտորը գրել է նաև երաժշտություն թատերական ներկայացումների համար:

ՂԱԶԱՐՈՍ ՍԱՐՅԱՆ

(1920 – 1998)



ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական արտիստ, պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր Ղազարոս (Լազար) Սարյանը հայ երաժշտության ականավոր դեմքերից է: Նա նաև ճանաչված հասարակական գործիչ էր ու մանկավարժ, Հայրենական մեծ պատերազմի մասնակից: Մեծ ճանաչում են բերել կոմպոզիտորի Սիմֆոնիկ պատկերները, Մ. Սարյանի կերպարվեստով ներշնչված «Հայաստան» սիմֆոնիկ պաննոն, ջութակի և դաշնամուրի համար գրված Արիա և տոկատը, Ջութակի կոնցերտը, Սիմֆոնիան: 1954-ին կոմպոզիտորը կատարման է ներկայացնում «Խաղաղության օրը» վոկալ-սիմֆոնիկ շարքը (Հ. Ղուկասյանի խոսքերով): Շարքի երեք մասը («Առավոտ», «Բերքի տոն», «Հանուն խաղաղության») բնույթով հակադիր, սեղմ ու ամփոփ պատկերայնության, պարզ ու ազնիվ գրելաոճի նմուշներ են: Մեկ տարի անց կոմպոզիտորն ավարտում է Սիմֆոնիկ պատկերները: 1995թ. Ֆրանսիայի Մեց քաղաքում, Պիեռ Բուլեզի անվան ժամանակակից երաժշտության դահլիճում մեծ հաջողությամբ հնչել է 1994թ. կոմպոզիտորի սիմֆոնիկ նվագախմբի համար գրված Պասակալիան: 1997թ՝ մահվանից մի քանի ամիս առաջ կոմպոզիտորը գրել է Անդանտե և պրեստո ստեղծագործությունը՝ ջութակի և կամերային նվագախմբի համար: Կոմպոզիտորական գործունեությանը զուգահեռ Ղազարոս Սարյանը նաև ակտիվ ու ճանաչված հասարակական գործիչ էր: Նա 26 տարեկանում աշխատել է Երևանի կոնսերվատորիայի ռեկտորի պաշտոնում, իսկ 1955-1956թթ. եղել է Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ:

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(1920 – 2012)



ԽՍՀՄ և ՀՀ ժողովրդական արտիստ Ալեքսանդր Հարությունյանն իր երկերում ազգային սիմֆոնիկ երաժշտության ավանդույթները միահյուսել է դասական սիմֆոնիզմի առանձնահատկություններին: Հարությունյանի որոնումներն ու հետաքրքրություններն առավելապես կապված էին դաշնամուրի հետ: Սկզբնական շրջանի փոքր կտավի գործերին հետևեց առաջին խոշոր երկը՝ Դաշնամուրի կոնցերտը: 1942թ. թավջութակի ու դաշնամուրի էքսպրոմտը կոմպոզիտորի ինքնատիպ մտածողության առաջին ամբողջական և լուրջ վկայությունն էր: Հարությունյանի ստեղծագործության մեջ առանձնանում են կոնցերտները. գրել է 13 կոնցերտ՝ տարբեր գործիքների (դաշնամուր, գալարափող, տուբա, տրոմբոն, ֆլեյտա և այլն) համար: Երիտասարդ երաժշտի մասնագիտական հասունացման ուղենիշեր են «Հանդիսավոր ներբողն ու քայլերգը»՝ սիմֆոնիկ նվագախմբի, «Հայրենիք» կանտատը՝ մենակատարների, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի, «Տոնական նախերգանքը»՝ սիմֆոնիկ նվագախմբի համար: Կոմպոզիտորի գեղարվեստական մտածողության ձեռքբերումներից են այդ տարիներին գրված գործերը՝ Շեփորի, Ձայնի կոնցերտները: Լավագույն ստեղծագործություններից է նաև Սիմֆոնիան, լարայինների համար գրված Սիմֆոնիետտան, Թեմա և վարիացիաները՝ շեփորի ու նվագախմբի համար, թավջութակի և նվագախմբի Պոեմը, «Քարավան» պիեսը՝ կլարնետի և էստրադային նվագախմբի համար, գործիքային սոնատները և այլն: Հարությունյանը գրել է նաև մի շարք խմբերգեր և երգեր: 1988թ. կոմպոզիտորը ստեղծել է հանրահայտ Ջութակի կոնցերտը՝ նվիրված Սպիտակի երկրաշարժին:
Հարությունյանը գրել է երաժշտություն թատրոնի, ինչպես նաև Հայֆիլմի, մասնավորապես «Ուրվականները հեռանում են լեռներից» (1955թ.), «Սիրտն է երգում» (համահեղինակ՝ Կոնստանտին Օրբելյան, 1956թ.), «Իմ ընկերոջ մասին» (1958թ.), «Նահապետ» (1977թ.) կինոֆիլմերի համար:

ՎԱՂԱՐՇԱԿ ԿՈՏՈՅԱՆ

(1921 – 1992)

Կոմպոզիտոր Վաղարշակ Կոտոյանը ծնվել է Թիֆլիսում: Միջնակարգ երաժշտական կրթությունը ստացել է թիվ 1 երաժշտական ուսումնարանում՝ սովորելով կոմպոզիցիա և դաշնամուր: 1944-1946թթ. սովորել է տեղի կոնսերվատորիայի կոմպոզիցիայի բաժնում՝ Ս. Բարխուդարյանի դասարանում:
1969 թվականից ղեկավարել է Հայաստանի պետական ֆիլհարմոնիան: Գրել է 9 օպերետ՝ «Փեսացուներ» (1954թ.), «Սիրո հովիտ» (1956թ.), «Ոսկե ապարանջան» (1958թ.) և այլն: Վերջիններս նշանակալի տեղ են գրավում հայ օպերետային արվեստում:
Հեղինակել է նաև երկու վոկալ-սիմֆոնիկ սյուիտ, դաշնամուրի երեք կոնցերտ, օրատորիա (Ե.Չարենցի խոսքերով)՝ սիմֆոնիկ նվագախմբի, երգչախմբի և մենակատարների համար, կոնցերտային ռոնդո՝ դաշնամուրի և նվագախմբի համար, պարային սյուիտ՝ սիմֆոնիկ նվագախմբի համար, սյուիտ լարային քառյակի համար, ռոմանսներ, երգեր («Լիրիկական», «Իմ Երևան», «Անծանոթ աղջկան» և այլն):
1964թ. գրել է «Շրթներկ համար 4» կինոֆիլմի երաժշտությունը:
1963թ. արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի կոչման:

ԷԴՎԱՐԴ ՄԻՐԶՈՅԱՆ

(1921 – 2012)

Կոմպոզիտոր, մանկավարժ, երաժշտական-հասարակական գործիչ է. Միրզոյանի ստեղծագործություններն ազգայինի և արդիականի սինթեզի բարձր չափանիշ են: Միրզոյանի լարային կվարտետը բեկումնային նշանակություն ունեցավ ազգային կամերային-գործիքային երաժշտության մեջ, իսկ Սիմֆոնիան հայկական սիմֆոնիայի զարգացման նոր փուլ խորհրդանշեց: Միրզոյանի սիմֆոնիան Դմիտրի Շոստակովիչն անվանել է «խորհրդային ողջ մշակույթի նվաճում»:
Սիմֆոնիկ երկերից բացի կոմպոզիտորը ստեղծագործել է նաև գործիքային ժանրում: Կոմպոզիտորի հասուն գրելաոճի վառ դրսևորումներից են «Ինտրոդուկցիա և անընդհատ շարժումը»՝ ջութակի և նվագախմբի համար (1957թ.), թավջութակի և դաշնամուրի Սոնատը (1967թ.), Դաշնամուրի պոեմը (1970թ.), դաշնամուրի համար «Ալբոմ թոռնիկիս» շարքը: Կոմպոզիտորի արվեստում առանձնահատուկ տեղ են գրավում Ավետիք Իսահակյանի և Եղիշե Չարենցի խոսքերով 1930-40-ականներին գրված ռոմանսները՝ «Ասում են թե», «Երազ տեսա» և այլն:
Հետաքրքիր ու գեղարվեստական տեսակետից արժեքավոր է կոմպոզիտորի կինոերաժշտությունը: Հատկապես լայն ճանաչում և ինքնուրույն կյանքի իրավունք ստացավ «Քառս» կինոֆիլմի համար գրված երաժշտությունը:

ԱՌՆՈ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

(1921 – 1983)



Մեծ է Առնո Բաբաջանյանի դերը հայկական և խորհրդային էստրադայի, ինչպես նաև դասական երաժշտության զարգացման գործում:
1950-ականների սկզբին Բաբաջանյանն ավարտեց Հերոսական բալադը, որը դարձավ ժամանակակից երիտասարդության ճակատագրի մասին խոհերի յուրահատուկ արտացոլում: Դրան հաջորդած դաշնամուրային տրիոն վկայում է կոմպոզիտորի գեղարվեստական նոր որոնումների, նոր ձեռքբերումների մասին: Կոմպոզիտորի ստեղծագործական հասունության բարձրակետը 1959թ. ավարտած Ջութակի ու դաշնամուրի սոնատն է:
Ա. Բաբաջանյանի վերջին խոշոր կտավը Դ. Շոստակովիչի հիշատակին նվիրված Լարային թիվ 3 կվարտետն է: Այն գեղարվեստական նոր մտածողության, ազգայինի նորարարական դրսևորման, ժամանակակից գրելաոճի բացահայտման տպավորիչ գործեր են:
Կոմպոզիտորի գործունեությամբ չի սպառվում երաժշտի նկարագիրը: Դաշնակահար Առնո Բաբաջանյանի կատարումների հետ է կապված ազգային երաժշտական արվեստի ամենից փայլուն և իր տեսակի մեջ դեռևս չգերազանցված էջը: Կատարող Բաբաջանյանն ուներ միայն իրեն հատուկ թավշյա, միաժամանակ հարուստ ու գունեղ ձայն:
Խորհրդային լավագույն կինոֆիլմերից շատերում ինչում են նրա հեղինակած կինոերաժշտությունը՝ «Առաջին սիրո երգը», «Երջանկության մեխանիկան», «Հարսնացուն հյուսիսից» և այլն:

ԱՆԴՐԵՅ ԲԱԲԱԵՎ

(1923 – 1964)

Հալ կոմպոզիտոր Անդրեյ Բաբաևը ծնվել է Արցախի Մարտունու շրջանի Մսմնա գյուղում: 1940թ. ընդունվել է Բաքվի կոնսերվատորիայի Ու.Հաջիբեկովի ստեղծագործական դասարանը: Այնուհետև ուսումը շարունակել է Կ.Կարաևի կոմպոզիցիայի դասարանում և 1950թ. ավարտել է Բաքվի կոնսերվատորիան: Նույն թվականին տեղափոխվել է Մոսկվա, որտեղ 1953թ. ավարտել է կոնսերվատորիայի ասպիրանտուրան (ղեկավար՝ Յու. Շապորին):
Բաբաևի ստեղծագործություններից են՝ «Երիտասարդություն» սիմֆոնիկ նախերգանքը (1948թ.), Դաշնամուրային տրիոն (1948թ.), Դաշնամուրի կոնցերտը՝ ժողովրդական գործիքների նվագախմբի նվագակցությամբ (1949թ., համահեղինակ՝ Ֆ.Ամիրով), Սիմֆոնիան (1950թ.), երկու սյուիտը՝ գրված ադրբեջանական ժողովրդական գործիքների նվագախմբի համար, մի շարք երգեր («Սիրելի աչքեր», «Ես հանդիպեցի մի աղջկա», «Կարոտում եմ քեզ» և այլն), երաժշտություն՝ գրված դրամատիկական ներկայացումների և կինոնկարների համար, ժողովրդական երգերի մշակումներ:
Առավել նշանավոր ստեղծագործությունն «Արծվաբերդ» օպերան է, որը 1957թ. բեմադրվել է Երևանի Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում, 1964թ.՝ Սվերդլովսկում, 1965թ.՝ Դոնեցկում, 1973թ.՝ Կազանում: «Արծվաբերդ» օպերան 1966թ. ցուցադրվել է նաև Մոսկվայի Կենտրոնական հեռուստատեսությամբ:
Վերջին ծավալուն ստեղծագործությունը կոմպոզիտորի «Պաղդասար աղբար» օպերան է, որ անավարտ է:
1958թ. արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի կոչման:

ԷԴԳԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

(1930 – 1998)



Բազմաժանր ու բազմազան ստեղծագործությունների հեղինակ է Էդգար Հովհաննիսյանը՝ օպերա, օպերա-բալետ, բալետներ, երեք սիմֆոնիա, կոնցերտներ, վոկալ-սիմֆոնիկ, կամերային-գործիքային, խմբերգային երկեր, երաժշտություն ֆիլմերի ու ներկայացումների համար, ժողովրդական երգերի մշակումներ:
Հովհաննիսյանի առաջին բալետը՝ «Մարմարը», նշանավորեց հայկական նոր բալետի ծնունդը: Հայկական բալետի, ինչպես նաև ընդհանրապես հայկական օպերային թատրոնի ստեղծագործական ակտիվության աստեղային ժամանակաշրջանը սկսվեց, երբ տակավին 30-ամյա երիտասարդ արվեստագետը ստանձնեց օպերայի և բալետի թատրոնի տնօրինությունը: Հովհաննիսյանի հմուտ խաղացանկային քաղաքականության, կազմակերպչական եռանդի ու մարդկային անսպառ հմայքի շնորհիվ թատրոնի շուրջը համախմբվեցին Հրաչյա Ղափլանյանի, Եվգենի Չանգայի, Հակոբ Ոսկանյանի, Յուրի Դավթյանի, Մինաս Ավետիսյանի պես վառ արվեստագետներ: Մեկը մյուսի հետևից ստեղծվեցին կոմպոզիտորի բալետները՝ «Հավերժական կուռքը»՝ Արտո Չաքմաքչյանի անզուգական ձևավորմամբ, «Երկնագույն նոկտյուրնը»՝ իր տեսակով նոր, մեկմասանի բալետը, «Անտունին», ուր միահյուսվել էին նրա երաժշտա-թատերական, սիմֆոնիկ ու խմբերգային ոճերը, «Սասունցի Դավիթ» օպերա-բալետը: Նորարարական էր նաև Հովհաննիսյանի միակ օպերան՝ «Ճանապարհորդություն դեպի Էրզրում», ըստ Պուշկինի համանուն գործի (1987թ.):
Վերջին տարիներին նորովի հնչեց հանրահայտ «Էրեբունի-Երևանը»: 2004թ. երգն արժանացավ իր իսկական գնահատմանը՝ պաշտոնապես ընդունվելով որպես մայրաքաղաքի օրհներգ:

ՊԵՏՐՈՍ ՇՈՒԺՈՒՆՅԱՆ

(ծնվ. 1957թ.)



Կանադահայ երաժիշտ, երգահան Պետրոս Շուժունյանը շուրջ 50 տարի երաժշտության ոլորտում է:
Լինելով Երևանի պետական կոնսերվատորիայի 3-րդ կուրսի ուսանող՝ 1976թ. նա տեղափոխվել է Կանադա և սկսել է կոմպոզիցիա ուսանել Մոնրեալի կվեբեկյան կոնսերվատորիայում, հռչակավոր կոմպոզիտոր Ժիլ Թրեմբլեի մոտ, որտեղ 1982թ. կոմպոզիցիայի գծով ստացել է մագիստրոսի աստիճան և երկրորդ մրցանակ, ներկայացնելով իր «Արարատ» սիմֆոնիկ պոեմը:
Պետրոս Շուժունյանը գրել է 100-ից ավելի նվագախմբային, կամերային, խմբերգային և դաշնամուրային ստեղծագործություններ, այդ թվում. «Կոմիտասին»՝ գրված կամերային նվագախմբի, երգչախմբի և երկու մենակատարների համար, վեց լարային քառյակ, «Սայաթ-Նովա» համերգային սյուիտ՝ հարվածայինների և մեծ նվագախմբի համար, «Սուրբ խաչ» օրատորիա՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակին: Նույն առիթով, Տորոնտոյի պետական ռադիոկայանի հետ համատեղ, նա հրատարակել է «Հայ հոգևոր երաժշտություն» ձայնասկավառակը՝ կանադահայ ճանաչված երգչուհի Իզաբել Բայրաքդարյանի մասնակցությամբ և Ռաֆֆի Արմենյանի ղեկավարությամբ: Նրա վերջին տարիների ծավալուն գործը եղել է «Պատարագ և հոգեհանգիստ, 2015» ստեղծագործությունը, նվիրված 1915թ. Մեծ եղեռնի զոհերի հիշատակին, որը ներկայացվել է «Սենթ Լորենս» երգչախմբի կատարմամբ, Մոնրեալում, 2015 թ. ապրիլի 11-ին:
Հայաստանում իր առաջին ելույթը ունեցել է 2016-ին կանադական «Մոլինարի» լարային քառյակի հետ:

Հայ կոմպոզիտորական արվեստի
10-րդ հոբելյանական փառատոն

ՏԵՐՏԵՐՅԱՆ-ՖԵՍՏ

Փառատոնը նվիրվում է Ավետ Տերտերյանի 90-ամյակին
Փետրվարի 20-Մարտի 12

Փետրվարի 23
Արամ Խաչատրյան համերգասրահ
19:00

Տիգրան Չուխաճյան՝ Անդադար շարժում դաշնամուրի և նվագախմբի համար
խմբագրումը՝ Ջոն Սարգսյանի
Մենակատար՝ Լիլիթ Արտեմյան (դաշնամուր)

Առնո Բաբաջանյան՝ Թավջութակի կոնցերտ
Andante sostenuto-Allegro energico con fuoco-Andante sostenuto

Մենակատար՝ Դենիս Շապովալով (թավջութակ)

Ընդմիջում

Գրիգոր Եղիազարյան՝ Սիմֆոնիա «Հրազդան»
I Largo maestoso/Allegro non troppo
II Allegro
III Adagio
IV Allegro

Դիրիժոր՝ Ռուբեն Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ

Մարտի 6
Արամ Խաչատրյան համերգասրահ
19:00

Էդգար Հովհաննիսյան՝ Պասակալիա «Անտունի» բալետից

Էդվարդ Միրզոյան՝ «Լոռեցի Սաքոն» սիմֆոնիկ պոեմ

Ընդմիջում

Հարո Ստեփանյան՝ Դաշնամուրի կոնցերտ
I Allegro animato-Moderato con spirito-Largo
II Andante con spirito
III Allegro giocoso
Մենակատար՝ Արմեն Բաբախանյան (դաշնամուր)
Դիրիժոր՝ Ռուբեն Ասատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ

Մարտի 12
Արամ Խաչատրյան համերգասրահ
19:00

Ավետ Տերտերյան՝ Սիմֆոնիա թիվ 7

Ընդմիջում

Ավետ Տերտերյան՝ Սիմֆոնիա թիվ 8

Դիրիժոր՝ Սերգեյ Սմբատյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՍԻՄՖՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ

ԱՋԱԿԻՑԵՐ

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՀՈՎԱՆԱԿՈՐԵՐ

Հավելյալ տեղեկությունների համար 077 570 410 www.armsymphony.am